*ՀՏԴ 94 (479.243)* *Պատմություն*

***Սամվել Մկրտչյան***
**ԵՊՀ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ,**
**պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**
**sam1959dok@mail.ru**

## ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայոց տոնածիսական համակարգում կատարված փոփոխությունները պայմանավորված էին ղարաբաղյան շարժմամբ ձևավորված համազգային զարթոնքով:

Ղարաբաղյան շարժման հետևանքով անձի աշխարհընկալման մեջ կատարվեց որոշակի վերարժևորում՝ կապված պետության, կրոնի և էթնոսի ինքնությունն արտահայտող այլ երևույթների հետ: Համազգային զարթոնքն արտահայտվեց նաև պատմական հիշողության համատեքստում:

Այդ երևույթներն ամբողջությամբ արտացոլվեցին հայոց տոնածիսական վարքագծում, ուր ակնառու են խորհրդային տոների անկման և ավանդական տոների վերելքի հակընթաց միտումները:

***Բանալի բառեր՝*** *Ղարաբաղյան շարժում, համազգային զարթոնք, պատմական հիշողություն, տոն, կրոն, մշակույթ, ավանդույթ*

***Самвел Мкртчян***
***(ЕГУ)***

## *ПРАЗДНИЧНАЯ СИСТЕМА АРМЯН В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ*

Изменения в празднично-обрядовой системе армян были обусловлены всенародным пробуждением, вызванным карабахским движением.

В результате карабахского движения в мировосприятии личности произошла существенная переоценка в контексте государственности, религии и других явлениях этнической идентичности. Общенациональное пробуждение также отразилось в контексте исторической памяти.

Эти явления были полностью отражены в празднично-обрядовом поведении армян, где очевидны тенденции резкого упада советских, и подъема традиционных праздников.

***Ключевые слова.*** *Карабахское движение, общенациональное пробуждение, историческая память, праздник, религия, культура, традиция*

***Samvel Mkrtchyan***
**YSU**

## ARMENIAN HOLIDAY SYSTEM IN THE CONTEXT OF THE KARABAKH MOVEMENT AND HISTORICAL MEMORY

Changes in the Armenian celebration system were conditioned by the pan-national awakening created by the Karabakh movement. As a result of the Karabakh Movement, a person's perception of the world has been re-evaluated connected with phenomena expressing the identity of the state, religion and ethnicity.

The national awakening was also expressed in the context of historical memory.

These phenomena were completely reflected in the Armenian holiday system, where the tendencies of the Soviet holidays and the rise of traditional holidays are evident.

***Key words:*** *Karabakh movement, national awakening, historical memory, holiday, religion, culture, tradition*

Տոների տարածումը պայմանավորող կարևոր գործոններից է համազգային զարթոնքը[1], որն անձի աշխարհընկալումներում պետության, մշակույթի, կրոնի ու էթնոսի ինքնությունն արտացոլող գաղափարների վերարժևորում է:

Հայոց համար 1980-ականների վերջը նշանավորվեց որպես ղարաբաղյան շարժման ալիքի վրա ձևավորված համազգային նոր զարթոնք, որի արդյունքում ստեղծվեցին հայոց երրորդ և Արցախի անկախ հանրապետությունները:

Հայոց տոնական համակարգում 1980-90-ականների համազգային զարթոնքի սաղմնավորման կամ անմիջապես նախորդող գործընթացն սկսվել էր դեռևս 1960-ականներից՝ կապված Հայկական հարցի հետ: Այն արտացոլվեց Մեծ եղեռնի հիսնամյակի (1965թ.) կապակցությամբ Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած իրադարձություններով, որոնց հետագայում հաջորդեցին Երևանի ծննդյան (1968թ.-2750-ամյակը) և Սարդարապատի հերոսամարտին նվիրված հանդիսությունները: Վերջինս, ըստ էության, գլխավորեց նախորդ դարասկզբին տեղի ունեցած մի շարք հերոսամարտերին (Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, Մուսա լեռ, Վան, Խարբերդ, Ուրֆա և այլն) նվիրված տոնահանդեսները:

Ղարաբաղյան շարժման հետևանքով հայոց տոնական համալիրում տեղի ունեցած փոփոխությունները շատ հստակ արտացոլում են պատմական այդ շրջանը, որը բնութագրվում է հայոց կրոնական և էթնիկ ինքնագիտակցության աճով: Այդ համատեքստում բավականին ակնառու էին խորհրդային տոների անկման և ավանդական տոների վերելքի հակընթաց միտումները:

Խորհրդային համակարգի փլուզումը դրսևորվեց այն խորհրդանշող պետական տոների անկմամբ, որը մասնավորապես նկատելի էր Հոկտեմբերյան հեղափոխության (71%-1980թ., 31%-1990թ.) և Աշխատավորների միջազգային համերաշխության (78%-1980թ., 32%-1990թ.) տոներում:

Համազգային զարթոնքն արտահայտվեց ավանդական գրեթե բոլոր տոներում, և այս առումով տարածման չափերով առանձնանում էին Վարդավառը (47%-64%), Խաչվերացը (27%-47%), Քրիստոսի Ծնունդը (24%-38%), Տեառնընդառաջը (20%-37%) և Ս. Աստվածածինը (21%-36%):

Չնայած խորհրդային տոների անկման միտումներին՝ դրանց մի մասը դեռևս պահպանում էր տարածման բարձր վարկանիշը: 1990-ականների սկզբներին ՀՀ գյուղական բնակավայրերում Մայիսի 1-ը և Մայիսի 9-ը կազմում էին 32% և 46%, իսկ Մարտի 8-ը՝ 57%: Դրանք այն տոներն էին, որոնք, կենցաղային ընկալումներում ենթարկվելով որոշակի տրանսֆորմացիայի, նույնիսկ ներթափանցել էին ընտանեկան միջավայր: Իսկ վերջինս, որպես օրինաչափություն, յուրաքանչյուր տոնի պահպանման և ավանդութացման հիմնական ոլորտն է: Գրեթե նույն պատկերն էր նաև Երևանում և ՀՀ քաղաքային այլ բնակավայրերում (տե՛ս աղյուսակներ 1 և 2):

**ԱՂՅՈՒՍԱԿ 1**

Տոների տարածվածության համեմատական
պատկերը երևանցիների կենցաղում %

| ՏՈՆԵՐ | Երևան | | |
|---|---|---|---|
| | 1976թ. | 1992թ. | 1999թ. |
| Նոր տարի | 100,0 | 100,0 | 100,0 |

[1] Ղարաբաղյան շարժման ողջ ծիսակարգը բնութագրելիս Լ. Աբրահամյանը տալիս է «համազգային զարթոնք» երևույթի վերլուծությունը, որը նախ և առաջ ենթադրում է էթնոսի՝ իր արմատների հետ ծագումնաբանական կապի յուրատեսակ զգացողություն: Ուշագրավ են հեղինակի անցկացրած զուգահեռները նախատոնի և 1980-ականների ղարաբաղյան շարժման միջև (տե՛ս ***Լ. Աբրահամյան,*** Քառսը և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում, Մշակույթ, 2.3, 1990, էջ 14-21):

| | | | |
|---|---|---|---|
| Քրիստոսի Ծնունդ | 33,0 | 60,0 | 68,0 |
| Տեառնընդառաջ | 12,0 | 25,0 | 33,0 |
| Վարդանանց | 7,0 | 0,3 | 5,0 |
| Զատիկ | 68,0 | 83,0 | 81,0 |
| Համբարձում | 5,0 | 6,8 | 6,0 |
| Վարդավառ | 23,0 | 33,0 | 36,0 |
| Ս. Աստվածածին | 15,0 | 27,0 | 15,0 |
| Խաչվերաց | 26,0 | 38,0 | 52,0 |
| Մարտի 8 | 90,0 | 24,0 | 64,0 |
| Մայիսի 1 | 89,0 | 7,0 | 7,0 |
| Մայիսի 9 | 69,0 | 12,0 | 12,0 |
| Ս. Սարգիս | - | 7,0 | 10,0 |
| Ծաղկազարդ | - | 6,5 | 10,0 |
| Ավետում | - | 2,7 | 30,0 |

**ԱՂՅՈՒՍԱԿ 2**

Տոների և հիշատակի օրերի տարածվածության համեմատական պատկերը
ՀՀ քաղաքային բնակչության կենցաղում.1980-1990-ական թթ. %

| ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ | 1980թ. | 1993թ. |
|---|---|---|
| Նոր տարի | 96,0 | 100,0 |
| Քրիստոսի Ծնունդ | 22,0 | 29,0 |
| Տեառնընդառաջ | 15,0 | 22,5 |
| Վարդավառ | 31,0 | 43,0 |
| Ս. Աստվածածին | 10,0 | 12,0 |
| Խաչվերաց | 20,0 | 22,0 |
| Ապրիլի 24 | 52,0 | 67,0 |
| Մարտի 8 | 88,0 | 38,0 |
| Մայիսի 1 | 84,0 | 9,0 |
| Մայիսի 9 | 70,0 | 14,5 |

Համազգային զարթոնքի այդ շրջանում քաղաքային բնակչության կենցաղում խորհրդային տոների անկումը համեմատաբար կտրուկ էր արտացոլված, քանի որ, ի տարբերություն գյուղի, քաղաքն իր գիտամշակութային և աշխատավորական ներուժով առավել ակտիվ ու արագ է արձագանքում հասարակական կյանքի տեղաշարժերին:

Այդ ժամանակաշրջանն աչքի ընկավ տարերային և ռազմաքաղաքական բնույթի աղետներով, որոնք, մուտք գործելով տոնացույց, համալրեցին ազգային ողբերգության հետ կապված պատմական տարեթվերը:

Խոսքը վերաբերում է Սպիտակի երկրաշարժի, Սումգայիթի, Կիրովաբադի (Գանձակի), Բաք-

վի հայերի կոտորածների, 1990թ. մայիսի 27-ի երևանյան դեպքերի և այլ իրադարձությունների կապակցությամբ կազմակերպվող սգո արարողություններին: Փորձությունների այդ շրջանում և հետագայում Ապրիլի 24-ի տարածման միտումները (1980թ.՝ 52%, 1993թ.՝ 67% - ՀՀ (տե՛ս աղյուսակ 2), 1976թ.՝ 67%, 1992թ.՝ 94% - Երևան (տե՛ս աղյուսակ 3), 1980թ.՝ 28,6%, 2008թ.՝ 68,3% - Իջևան, 1980թ՝ 7%, 2009 թ՝ 93,7% - Կապան (տե՛ս աղյուսակ 4) պայմանավորված էին եղերական նոր դեպքերի հետևանքով վերազարթնած պատմական հիշողությամբ: Իսկ Մեծ եղեռնն ամփոփում է և՛ պատմական այդ փուլը, և՛ ընդհանրապես հայոց ճակատագրին առնչվող գրեթե բոլոր եղերական իրադարձությունները:

Որպես օրինաչափություն համազգային զարթոնքի համատեքստում ոչ միայն ակտիվանում է բնակչության տոնական և կոնական վարքագիծը, այլև վերարթնանում է պատմական հիշողությունը:

Պատմական հիշողությունը մասնավորապես բնութագրական է իր բնօրրանից բռնի տեղահանվածներին: Գաղթական նորնախիջևանցիների Զատկի[1] ծեսն այդ երևույթի տիպիկ օրինակ է:

Տոներում արտահայտված պատմական հիշողությունը հաճախ վերաբերում է նաև բռնի տեղահանության ճակատագիրը կիսած դրացի էթնիկ հանրույթներին՝ դրանով իսկ արտացոլելով բարեկամական ավանդույթներ:

Ամենացայտուն օրինակներից էր գաղթական հայերի և հույների մասնակցությունը Ս. Աստվածածնի տոնին իրենց նոր բնակավայրում՝ Ռուսաստանի Մարիուպոլ քաղաքում, ուր գտնվում էր վերաբնակ հույների կողմից նախկին բնօրրանից (Ղրիմից) բերված Բախչիսարայի Պանագիա Տիրամոր պատկերը[2]:.

Պատմական հիշողության հետ է կապված նաև Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված համազգային սգո արարողությունը, որի տարածումը հետխորհրդային շրջանում բավականին ընդլայնվել է (տե՛ս աղյուսակներ 3 և 4):

**ԱՂՅՈՒՍԱԿ 3**

Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի տարածման համեմատական պատկերը Հայաստանում (1970-1990-ական թթ.) %

| Հայաստան | 1980թ. | 1993թ. |
|---|---|---|
| | 47,0 | 67, 0 |
| Երևան | 1976թ. | 1992թ. |
| | 67,0 | 94,0 |

**ԱՂՅՈՒՍԱԿ 4**

Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի տարածման համեմատական պատկերը իջևանցիների և կապանցիների շրջանում (1980-ական թթ.-21-րդ դարասկիզբ) %

| Իջևան | 1980թ. | 2008թ. |
|---|---|---|
| | 28,6 | 68,3 |
| Կապան | 1980թ. | 2009թ. |
| | 7,0 | 93,7 |

[1] Ամեն Զատկին տոնի անունը կրող միջատի հետ նախկին հայրենիքի մասին գաղթականների ծիսական զրույցները, հատկապես վերադառնալու բաղձանքով, հայոց ներէթնիկ այդ խմբի պատմական հիշողության տիպիկ դրսևորում են (տե՛ս ***Ե. Շահազիզ,*** Նոր-Նախիջեւանը եւ Ն. նախիջեւանցիք, ԱՀ, գիրք IX, տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1902, էջ 24-25, 83):

[2] ***Ե. Շահազիզ,*** նշվ. աշխ., էջ 34-35:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի արարողության մասնակիցների թվի մեծացումը նախորդ դարավերջին պայմանավորված էր ղարաբաղյան շարժման ու խորհրդային համակարգի փլուզման հետևանքով ձևավորված համազգային զարթոնքով, որը դրսևորվեց հայոց ինքնագիտակցության մեջ տեղի ունեցած էթնոմշակութային և քաղաքական արժեքների վերագնահատմամբ[1]:

Համազգային այդ արարողության մեծ մասշտաբները նախ և առաջ պայմանավորված էին կորուսյալ հայրենիքի և միլիոնավոր նահատակների հետ կապված սերունդների պատմական կոլեկտիվ հիշողության վերելքով[2]:

Պատահական չէ, որ այն հարցադրմանը, թե «պատմական անցյալի ի՞նչ իրադարձություն է Ձեզ առավել հուզում», պատասխանը գրեթե միանշանակ էր՝ Մեծ եղեռնը (տե՛ս աղյուսակ 5), նույնիսկ այն դեպքում, երբ հարցը տրված էր համաշխարհային պատմության համատեքստում:

Պատմական հիշողության ծիսահամալիրում Ապրիլի 24-ի մեծ կշիռը պայմանավորված էր ոչ միայն այդ տարեթվին կատարված իրադարձությունների ողբերգական նշանակությամբ, որը ճակատագրական եղավ համայն հայության համար, այլև այն բանով, որ այդ սուգն ամփոփում էր ազգի գոյատևման համար ճակատագրական նշանակություն ունեցող գրեթե բոլոր եղերական իրադարձությունները:

**ԱՂՅՈՒՍԱԿ 5**

Պատմական անցյալի արժևորման համեմատական պատկերը քաղաքային բնակչության կենցաղային ընկալումներում (1980-1990-ական թթ.) %

| Պատմական իրադարձությունները | Կամո | | Իջևան | | Կապան | | Գյումրի | | Երևան | | **Ընդ.** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1980թ. | 1993թ. | 1980թ. | 1993թ. | 1980թ. | 1993թ. | 1980թ. | 1993թ. | 1976թ. | 1992թ. | **1980թ.** | **1993թ.** |
| Մեծ եղեռն | 54,0 | 58,0 | 38,0 | 39,0 | 40,0 | 63,0 | 43,0 | 38,0 | 47,0 | 66,0 | **45,0** | **53,0** |
| Երկրորդ համաշխարհային կամ Հայրենական մեծ պատերազմ | 35,0 | 4,0 | 49,0 | 1,0 | 51,0 | 0,0 | 43,0 | 2,0 | 31,0 | 6,0 | **41,0** | **2,6** |
| Հայ ժողովրդի անցյալի պատմությունից | 7,0 | 3,6 | 10,0 | 0,0 | 9,0 | 4,7 | 11,0 | 5,5 | 13,0 | 6,3 | **10,0** | **4,0** |
| Հոկտեմբերյան հեղափոխություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,7 | 0,0 | 0,0 | 3,0 | 0,0 | **0,6** | **0,1** |
| Սպիտակի երկրաշարժ (1988թ.) | - | 6,0 | - | 27,0 | - | 19,0 | - | 50,0 | - | 10,0 | **-** | **22,0** |
| Ղարաբաղյան շարժում, Ադրբեջանի հայության զանգվածային տեղահանումներ ու կոտորածներ | - | 24,0 | - | 29,0 | - | 11,0 | - | 2,0 | - | 7,0 | **-** | **14,0** |
| Այլ | 4,0 | 4,4 | 3,0 | 4,0 | 0,0 | 1,5 | 3,0 | 2,5 | 6,0 | 4,7 | **3,4** | **4,3** |

[1] ***Հ. Մարության,*** Հայ ինքնության պատկերագրությունը. Ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը, հ. 1, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 266:

[2] Նշվ. աշխ., էջ 167:

Մեծ եղեռնը դարձավ հայոց ծիսահամալիրի այն գլխավոր արժեքը, որը սերտորեն կապված է հայ նահատակների հավերժ հիշատակի և, որ ամենակարևորն է, ազգային միասնության գաղափարախոսության հետ: Պատմության դաժան պարտադրանքով այն դարձել է հայոց ինքնության և մտածողության անբաժանելի մասը[1]:

Համազգային զարթոնքն արտահայտվեց ոչ միայն ավանդական տոների վերելքով, այլև ազատագրական հերոսամարտերին, ֆիդայիներին (Արաբո, Սերոբ, Սոսե, Չաուշ, Անդրանիկ, Սմբատ, Նժդեհ և այլն) նվիրված հանդիսություններով:

Այդ զարթոնքն արտացոլվեց նաև բնակչության կրոնական վարքագծի կտրուկ աճով (տե՛ս աղյուսակներ 5 և 6):

**ԱՂՅՈՒՍԱԿ 5**

ՀՀ բնակչության կրոնական վարքագծի համեմատական պատկերը
(1980-1990թթ.) %

| Վերաբերմունքը կրոնի նկատմամբ | Գյուղ | | Քաղաք | |
|---|---|---|---|---|
| | 1980թ. | 1990թ. | 1980թ. | 1993թ. |
| Հավատում է | 49,0 | 62,0 | 33,0 | 63,0 |
| Տատանվում է | 21,0 | 19,0 | 19,0 | 22,0 |
| Չի հավատում | 24,0 | 19,0 | 44,0 | 13,0 |
| Կրոնի դեմ պետք է պայքարել | 6,0 | 0,0 | 4,0 | 2,0 |

**ԱՂՅՈՒՍԱԿ 6**

ՀՀ քաղաքային բնակչության կրոնական վարքագծի համեմատական պատկերը
(1970-1990-ական թթ.) %

| Վերաբերմունքը կրոնի նկատմամբ | Կապան | | Իջևան | | Կամո | | Գյումրի | | Երևան | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1980թ. | 1993թ. | 1980թ. | 1993թ. | 1980 թ. | 1993թ. | 1980թ. | 1993թ. | 1976թ. | 1992թ. |
| Հավատում է | 27,0 | 80,0 | 32,5 | 40,0 | 27,0 | 43,0 | 45,0 | 89,0 | 37,0 | 68,0 |
| Տատանվում է | 14,0 | 18,0 | 17,9 | 32,0 | 13,0 | 28,0 | 16,0 | 10,0 | 20,0 | 16,0 |
| Չի հավատում | 51,0 | 2,0 | 46,8 | 28,0 | 52,0 | 21,0 | 35,0 | 1,0 | 38,0 | 14,5 |
| Կրոնի դեմ պետք է պայքարել | 8,0 | 0,0 | 2,8 | 0,0 | 8,0 | 8,0 | 4,0 | 0,0 | 5,0 | 1,5 |

Այսպիսով, ղարաբաղյան շարժման արդյունքում ձևավորված համազգային զարթոնքը վճռորոշ գործոն էր հայոց տոնական համակարգի փոփոխման ու պահպանման տեսանկյունից: Այդ փոփոխությունները հիմնականում ունեն էթնոհոգեբանականն երանգավորում, քանի որ բնակչության տոնական և կրոնական վարքագծերի անկումն ու վերելքը պայմանավորված էին ոչ թե մշակութային այդ ֆենոմենի բոպեական մոռացմամբ կամ նախկինում մերժվածի հանկարծակի վերելքով (մի երևույթ, որը բնորոշ չէ հատկապես պահպանողական հատկանիշներով բնութագրվող կենցաղին), այլ անձի աշխարհընկալումներում ազգային-կրոնական արժեքների վերագնահատմամբ:

[1] ***Վ. Սվազլյան,*** Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2011, էջ 7: